«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Սարգսյան Հայաստան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Բաղրամյանի Թորգոմ Փոստաջյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
1. Բարոյական արժեքների էությունը և առանձնահատկությունները 5
2. Բարոյական արժեքների ձևավորումը պատմության դասավանդման գործընթացում, մանկավարժական պայմանները 14
Դասի պլան 17
Եզրակացություն 20
Օգտագործված գրականության ցանկ 22

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Արժեքային համակարգը անձնական բնութագիր է, որն իրար է միացնում այնպիսի որակներ ու հասկացություններ, ինչպիսիք են բարությունը, պարզությունը, անձնական մաքրությունը, աշխատասիրությունը, կարգապահությունը և այլն: Այս հիմնախնդիրները դրված են ժամանակակից ուսուցիչների դաստիարակչական աշխատանքների իրականացման հիմքում:

Բարոյական դաստիարակությունը մի ամբողջական գործընթաց է, որն ուղղված է աճող սերնդի կողմից վարքի կանոնների և նորմերի տիրապետմանը:

Այն դաստիարակության ընդհանուր համակարգի ամենակարևոր և հին բաղադրամասերից մեկն է:

Բարոյական դաստիրակությունը իրականացվում է անձնավորության կենսագործունեության ամբողջ ընթացքում:

Բարոյական դաստիարակությունը բարդ պրոցես է, որի հաջողությունը կախված է բարոյական դաստիարակության համակարգից, նրա տարբեր գործոնների ճիշտ համակցումից, անձի կյանքի, գործունեության և վարքի խելացի կազմակերպումից:

Բարոյական դաստիարկությունը բոլոր ժամանակներում այնքան կարևոր դեր է կատարել հասարակության կյանքում, որ նույնիսկ Հին հունական ագելլաներն ու Էֆեբիաներն են կարևորագույն տեղ հատկացնում բարոյական դաստիա-րակությանը: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը լույս տեսած գեղարվեստական ու մանկավարժական գրականության գերակշիռ մասը վերաբերում է բարոյական դաստիարակությանը:

Բարոյական դաստիարակության անդրադարձել են Սենեկան, Դեմոկրիտը, Արիստոտլեը, Ջ Լոկը, Բելինկսին, Խ. Աբովյանը և այլոք:

Մարդու բարոյական դաստիարակությունը, նրա հոգևոր զարգացած անհատականությունը, իր հայրենիքի նկատմամբ սերն ու հարգանքը, կարևոր պայման է տվյալ երկրի զարգացման համար: Բարոյական արժեքները պետք է ներառվեն բոլոր կրթական ծրագրերում, դպրոցական կյանքի մաս դառան, որպեսզի ձևավորվի անհատի, քաղաքացու բարոյական կերպարը:

Թեմայի ուսումնասիրության **նպատակ**ն է ներկայացնել բարոյական արժեքների էությունը և առանձնահատկությունները, դրանց ձևավո:

Ելնելով առաջադրված նպատակից առաջադրվել են հետևյալ **խնդիրներ**ը՝

1. իրականացնել համապատասխան գրականության ուսումնասիրություն,
2. ներկայացնել բարոյական արժեքներիւ էությունը,
3. ներկայացնել բարոյական արժեքների ձևավորումը հայոց պատմության դասավանդման գործընթացում,
4. Կազմել դասի պլան:

Աշխատանքի առարկան և օբյեկտը: Ուսումնասիրության առարկան բարոյական արժեքներն են:

Ուսումնասիրության օբյեկտը բարոյական արժեքների համակարգն է պատմության դասավանդման գործընթացում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու ենթահարցերից, դաի պլանից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

1. Բարոյական արժեքների էությունը և առանձնահատկությունները

Արժեքային պատկերացումների խնդիրը պատմության ողջ ընթացքում արդիական է եղել: Համոզմունքն ու արժեքները անձին պատրաստի չեն տրվում, դրանք հանդիսանում են անձի կենսագործունեության ընթացքում ձեռք բերված փորձի և իտելեկտուալ ձեռքբերումների հետևանք:

Ժամանակակից աշխարհում կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ:

Ամբողջ կյանքի ընթացքում մարդը տիրապետում է որոշակի գիտելիքների, հայացքների, համոզմունքների, արժեքների համակարգի, որոնց հիման վրա ընկալում է բարին ու չարը, դրականն ու բացասականը, թույլատրելին ու անթույլատրելին, վարքի նորմերը, կենսագործունեության կանոնները, գիտակցում է կյանքի իմաստը, արժևորում է մարդկային հարաբերությունները, իր տեղն ու դերն աշխարհում: Բարոյականությունն արժեքների և գերակա պահանջմունքների, համամարդկային գերակա նորմերի ու սկզբունքների համակարգ է, որը մարդկանց կողմնորոշում է դեպի համամարդկային համերաշխության, գթասրտության, սիրո և բարության գաղափարները, հոգևոր բարձր իդեալները: Բարոյականությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում իրականացնում է մարդկանց վարքը կարգավորելու սոցիալական կարևոր գործառույթներ: Բարոյական դաստիարակությունն անձի ընդհանուր դաստիարակության համակարգի կարևոր բաղադրատարրն է, հասարակական գիտակցության ձև:

Բարոյական դաստիարակություն, բարոյական զարգացում, բարոյական արժեհամակարգ, բարոյական գիտակցություն, բարոյական գործողություն, բարոյական վարք հասկացությունները փոխկապակցված են և որոշ չափով պայմանավորված հասարակական հարաբերությունների բնույթով, սոցիալ-մշակութային առանձնահատկություններով, ինչպես նաև էթնիկ յուրահատկություններով[1]:

[1] Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան – Մանկավարժության տեսություն և պատմություն (էջ. 79-82)

Բարոյական գիտակցությունը հասարակական գիտակցության ձևերից մեկն է, մարդկանց սոցիալական կեցության արտացոլումը: Անհատի բարոյական գիտակցությունը բնութագրվում է որպես գոյություն ունեցող նորմերին երևույթների նկատմամբ անձի կողմից հուզական վերաբերմունքի դրսևորում՝ արտահայտված բարոյական ապրումներում, զգացումներում, խղճի, պարտքի, պատասխանատվության, արժանապատվության, ապրումակցմանմեջ: Բարոյական գիտակցությունը մարդուն բարու և չարի միջև ընտրության հնարավորություն է ընձեռում, որն իրականանում է սեփական համոզմունքով և խորապես գիտակցված վերաբերմուքով: Բարոյական գործողությունն այն արարքն է, որն ունի դրական կամ բացասական բարոյական արժեք, ենթակա է բարոյական գնահատման, և որի համար մարդը պատասխանատվություն է կրում: Յու. Ամիրջանյանը գրում է, որ արարքը գործողություն է. Մարդու արարքն արտահայտվում է ինչ-որ գործողության մեջ: Սակայն գործողությունը դեռևս արարք չէ, քանի որ գործողության իմաստը, որը նրա ներքին կողմն է, դեռևս հայտնի չէ, հայտնի է միայն արտաքին կողմը[2]:

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական ձևավորումն է: Բարոյական դաստիարակության հիմնական խնդիրներն են անձի բարոյական գիտակցության, զգացմունքների ու վարքի, կարևորագույն բարոյական որակների՝ հայրենասիրության, հումանիզմի, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի, գիտակցական կարգապահության և այլնի ձևավորումը:

Հայրենասիրությունը ենթադրում է սեր հայրենիքի նկատմամբ, նրա պաշտպանության պատրաստակամություն, աշխատանք հանուն հայրենիքի բարօրության, հավատարմություն ազգային ավանդույթներին, ազգային արժանապատվության, հպարտության ու պատվի իմացություն:

Նրանում է արտահայտվում վարքի վարքի ամենաբարձր մոտիվացիան, որը որոշվում է հասարակական պարտքով: Քաղաքացիական պարտքը խթանում է մարդու սոցիալական ակտիվությունը նրա կենսագործունեության բոլոր ոլորտներում և ամենից առաջ իր հայրենիքի շահերի պաշտպանության, իր

[2] Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան – Մանկավարժություն

քաղաքացիական պարտականությունների ազնիվ կատարման մեջ՝ աշխատանքում, հասարակական գործունեության մեջ[3]:

Հումանիզմը բարոյականության հիմնական սկզբունքներից մեկն է, անձի կարևորագույն որակը: Այդ սկզբունքի հիման վրա իրագործվում է մարդու՝ որպես հասարակության բարձրագույն արժեքի նկատմամբ հարգանքի դաստիարակությունը, արժանապատվության, հպարտության ու պատվի զգացումների զարգացումը:

Հումանիզմը պահանջում է հարգել յուրաքանչյուր մարդու մեջ մարդկային արժանապատվությունը, անկախ գույքային դրությունից,սեռից, ռասսայից, ազգությունից: Այն իր մեջ պարունակում է մարդկային հումանիզմի դրսևորումը, որը հավերժացված է համակեցության որոշակի նորմերում. մարդու վշտին ցավակցելը, պատրաստակամությունը օգնել դժբախտության մեջ, պաշտպանել բռնացումից կամ վիրավորանքից:

Աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը բարոյականության կարևորագույն բաղադիրչներից է: Այն ենթադրում է սեր դեպի աշխատանքը,աշխատելու պահանջմունք, պատրաստակամություն անձնվեր գործունեության հանուն հասարակության բարօրության, հասարակության մեջ աշխատանքի նշանակության և անհրաժեշտության գիտակցում:

Աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի գլխավոր հատկանիշներն են. անշահախնդրություն, գիտակցական պատասխանատու վերաբերմունքը աշխատանքային պարտականությունների նկատմամբ, կարգապահությունը, ստեղծագործական որոնումը, նախաձեռնությունը, գործունեության արդյունքները կանխատեսելու և ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու կարողությունը, կոլեկտիվ համագործակցությունը,ընկերներին օգնություն ցույց տալու պատրաստակամությունը, աշխատավոր մարդու արժանապատվության ու պատվի զարգացած զգացումը:

Բարոյականության բաղկացուցիչ մասը գիտակցական կարգապահությունն է: Կարգապահության տակ հասկացվում է անձնական ու հասարակական պարտքի

[3] Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան – Մանկավարժության տեսություն և պատմություն (էջ. 79-82)

կատարում, պետական, անձնական, հասարակական պարտականությունների անաղարտ կատարում, հասարակության մեջ ընդունված համակեցության, մարդկանց, աշխատանքի ու հասարակական սեփականության նկատմամբ նորմերի պահպանում:

Բարոյական դաստիարակության փոխկապվածությունն իրագործվում է դպրոցականների իդեալների ուղղվածության, նրանց բարոյական վարքը ուսումնական, աշխատանքային ու հասարակական գործունեության մեջ կազմակերպելու միջոցով:

Դպրոցական կյանքի առաջին տարիներից սկսած երեխան դիմում է իրենց շրջապատող մարդկանց սոցիալապես արժեքավոր իդեալներին: Իսկ իդեալներն են՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն, խաղաղություն և բարեկամություն, որոնք յուրացվում են դպրոցականների կողմից ուսուցման գործընթացում: Բարոյական իդեալն իրականացվում է դպրոցականների կենսական պլաններում ու վարքի օրինակներում, դրսևորվում նրանց կենսադիրքերում, կատարյալ անձի մասին պատկերացումներում և հասարակության հետ նրա հարաբերություններում: Այդ պատկերացումները կարող են լինելընդհանրացված, ընտրական, կարող են հանդես գալ բարոյական գործունեության ծրագրի ձևով: Անհատի կոնկրետ պատկերացումը կատարյալ անձի վերաբերյալ ձևավորվում է գիտելիքների, յուրացված բարոյական նորմերի ու վարքի համապատասխան փորձի հիման վրա՝ սոցիալական կյանքի դիտվող երևույթները ընդհանրացնելու ուղիով[4]:

Բարոյական իդեալը էական դեր է խաղում դպրոցականների կենսական պլանների ձևավորման մեջ: Իդեալի ու կյանքի պլանների ձևավորման մեջ: Իդեալի ու կյանքի պլանների փոխազդեցությունը պայմանավորված է դպրոցականների իմացական հետաքրքրություններով, նրանց բարոյական զգացմունքներով ու կամքով, ինքնագիտակցության զարգացման մակարդակով: Բարոյական իդեալներն արտացոլում են դպրոցականների պատկերացումները հասարակական սոցիալական արժույթների մասին և անմիջականորեն կապվածեն նրանց մասնագիտական ձգտումների հետ:

[4] Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան – Մանկավարժության տեսություն և պատմություն (էջ. 79-82)

Դեռահասության և առանձնապես վաղ պատանեկության տարիքում դպրոցականներն ընդունակ են թափանցել ուրիշ մարդկանց մոտիվացիոն ոլորտը, վերլուծել նրանց գործողություններն ու արարքները, համադրելդրանք իր գործողությունների հետ և դրանց ներգործությամբ փոխել վարքի սովորական եղանակը կամ կազմավորված հայացքները, որը բարենպաստորեն է ներգործում նրանց կողմից բարոյական օրինակների յուրացման վրա:

Բարոյական դաստիարակության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում բարոյական սովորույթները: Վարքի նկատմամբ սովորույթը, որը որոշվում է խորապես յուրացված բարոյական նորմերով, բարոյական դրդապատճառի կայունության ցուցանիշն է: Ի տարբերություն վարքի ավտոմատացված հմտությունների՝ սովորույթն ընդգրկում է յուրացված գործողությունները կատարելու և վարքի յուրացված եղանակներից օգտվելու պահանջմունք:

Վարքի սովորական եղանակներն ու ձևերը մշակվում են բարոյական բոլոր նորմերի յուրացման գործընթացում: Բազմաթիվ բարոյական սովորույթներ անհրաժեշտ են հումանիզմի, աշխատանքի նկատմամբ հատուկ վերաբերմունքի, գիտակցական կարգապահության և այլնի ձևավորման համար:

Սովորույթները պայմանականորեն բաժանվում են պարզի ու բարդի: Պարզ սովորույթների տակ ենթադրվում են այն արարքներն ու գործողությունները, որոնց հիմքում ընկած են համակեցության տարրական կանոնները, սահմանված կարգապահության ու հաղորդակցման էսթետիկայի նորմերը:

Բարդ բարոյական սովորույթներին են վերաբերում քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան պարտականությունների բարեխիղճ կատարման պահանջմունքները, բարոյական գործողությունները: բարոյական դաստիարակության կարևորագույն խնդիրն է արարքները վերածել սովորույթների: Բարոյական սովորույթների դաստիարակության նկատմամբ մանկավարժական պահանջները հիմնված են դպրոցականների վարքի ու գիտակցության միասնության ու փոխկապվածության վրա:

Բարոյական սովորույթի դաստիարակությունն անհրաժեշտ է իրագործել աշակերտի վարքի դրական մոտիվացիայի հիման վրա: Հոգեբանական

հետազոտություններով սահմանվել է,որ վարքի կայուն ձևերի ձևավորման պայմանը արարքի մանկավարժորեն արժեքավոր մոտիվացիայի կազմակերպումն:

Բարոյական դաստիարակության խնդիրների դասակարգման հարցը մշտապես հետաքրքրել է մանկավարժ-տեսաբաններին, որոնք փորձել են խմբավորել խնդիրները բարոյական դաստիարակության նպատակին հասնելու իրենց տրամաբանությամբ: Բարոյական դաստիարակության խնդիրներն, ըստ Վ.Ի. Լոգինովայի և Պ.Գ.Սամորուկովայի, իրականացվում են որոշակի տրամաբանությամբ և և բաժանվում են երեք խմբի հետևյալ հաջորդականությամբ.

- Բարոյականգիտակցությանզարգացմանխնդիրներ,
- Բարոյական վարքի ձևավորման խնդիրներ,
- Բարոյական զգացմունքների և հարաբերությունների հաստատման խնդիրներ[5]:

Այսպիսով ժամանակակից դասակարգմամն բարոյական դաստիարակության խնդիրները բաժանվում են երկու խմբի.

- Խնդիրներ, որոնք ուղղված են բարոյական դաստիարակության մեխանիզմների անխափան աշխատանքին, մեխանիզմի բաղադրատարրերի ձևավորմանը;
- Խնդիրներ՝ ուղղված անձնային բարոյական հատկությունների ձևավորմանը:

Առաջին խմբի խնդիրները կայուն են և անփոփոխ, դրանք արտացոլում են բարոյականությանօբյեկտիվ՝ համամարդկային բնույթը և նպաստում երեխայի մեջ բարոյականության ընդհանուր պատկերի կառուցմանը, ինչպես նաև բարոյականության յուրաքանչյուր բաղադրիչիինքնուրույն ձևավորմանը: Երկրորդ խմբի խնդիրներն իրենց բնույթով փոփոխական են ու շարժուն, դրանք բնորոշում են տվյալ հասարակության պահանջները՝ վաղվա քաղաքացու անձնային որակների ձևավորման ուղղությամբ: եթե խորհրդային հասարակությունը առավել կարևորում էր հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի, աշխատասիրության և կոլեկտիվիզմի դաստիարակությունը, ապա հասարակության զարգացման ներկա

[5] Ղուկասյան Լ., Միքայելյան Լ. – Մանկավարժություն (Էջ. 65-67)

ժամանակահատվածում շեշտադրում են այնպիսի անձնային հատկանիշներ, ինչպիսիք են.

- Մարդասիրությունը և հանդուրժողականությունը;
- Ձեռներեցությունը և կյանքի հանդեպ ակտիվ դիրքորոշումը;
- Ստեղծագործական ընդունակությունները և կրեատիվ-ստեղծարար դիրքորոշումները;
- Ինքնասիրությունն ու արժանապատվությունը;
- Հայրենասիրությունը և միաժամանակ կոսմոպոլիտ մտածողությունը;
- Աշխատասիրությունն ու համագործակցելու կարողությունները;
- Քաղաքացիական հատկությունները[6]:

Բարոյական դաստիարակության բովանդակությունն իրականացվում է անհատակողմնորոշիչ հաղորդակցման սկզբունքներով, այն է.

- Դաստիարակության գործընթացը երեխայակենտրոն է, այսինքն, երեխան ընկալվում է իբրև գերագույն արժեք ինքնատիպ և անկրկնելի իր դրսևորումներով;
- Դաստիարակության գործընթացի նպատակը անհատականության բացահայտումն է;
- Դաստիարակության կարևորագույն սկզբունքը երեխայի ձևավորվող անձի հանդեպ սերն ու հարգանքն է ;
- Երեխան հանդես է գալիս դաստիարակության գործընթացի սուբյեկտի՝ լիիրավ,գիտակից և պատասխանատու մասնակցի դերում:

Անհատակողմնորոշիչ դաստիարակության գործընթացը նախադպրոցական տարիքում ուղղված է երջանիկ լինելու զգացողության զարգացմանը, որն արտահայտվում է երեխայի բարձր տրամադրությամբ և դրական տրամադրվածությամբ, վստահությամբ սեփական ուժերի մեջ և հաղորդակցվելու և համագործակցելու պատրաստակամությամբ:

[6] Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան – Մանկավարժության տեսություն և պատմություն (էջ. 79-82)

Ուրախ և երջանիկ երեխան ընդունակ է լսելու և հետևելու մեծահասակների խոսքին, լավ սովորելու և գործելու, պատրաստ է սխրանքների և հերոսության: Տխուր, անտրամադիր երեխային բնորոշ են անտարբերության դրսևորումներ, ստիպված գործողություններ և հետաքրքիր ապրելակերպ:

Բարոյական դաստիարակության բնագավառները

Իրավական դաստիարակություն

Բարոյական հայացքը սերտորեն կապված է վարքի համապատասխան նորմերի հետ: Իրավական բնագավառում բոլոր հայացքները չէ, որ ձևակերպված են իրավական նորմերի մեջ: Բարոյական դաստիարակությունը ենթադրում է անձնավորության իրավական դաստիարակությունը պետական օրենքներին և նորմերին ծանոթացնելը: Բարոյական աշխարհըմբռնողությունը սերտորեն կապված է համապատասխան վարքագծի և նորմաների հետ:Դպրոցականը պետք է իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, և դրանք իր դաստիարակի օգնությամբ ամրակայի իր մեջ: Սա մանկավարժական, հասարակական պահանջ է:

Բարոյական նորմի իրականացումը, ի տարբերություն իրավականի, կապված է հասարակական կարծիքի ու մարդու խղճի հետ: Հասարակական կարծիքը խաղում է արտաքին սոցիալական, խիղճը՝ ներքին վերահսկողության դեր:

Սեռական դաստիարակություն

Դպրոցը պետք է երեխաներին նախապատրաստի ընտանեկան կյանքին: Սեռական դաստիարակությունը բարոյական դաստիարակության կարևոր տարրերից մեկն է հանդիսանում: Նրա ճիշտ իրագործումը մեծ նշանակություն ունի անձի ներդաշնակ զարգացման, նրա բարոյական առողջության համար: Սեռական դաստիարակության նպատակն է աշակերտների մեջ ձևավորել սեռերի փոխհարաբերությունների բնագավառում բարոյական նորմերի ու դիրքորոշումների էության ճիշտ ըմբռնումը և դրանցով ղեկավարվելու պահանջմունքը կյանքի ու գործունեության բոլոր ոլորտներում:

Գիտակցական կարգապահություն

Կարգապահությն տակ հասկացվում է անձնական ու հասարակական պրտքի կատարում, պետական, անձնական, հասարկական պարտականությունների անաղարտ կատարում, հասարակության մեջ ընդունված համակեցություն: Ա. Ս.

Մակարենկոն պնում էր, որ կարգապահությունը բարոյական ու քաղաքական երևույթ է: Այն ոչ թե ինչ որ առանձնահատուկ կարգապահական միջոցառումների արդյունք է, այլ դաստիարակության արդյունք: Բարոյական և գաղափարական դաստիարակության կապը իրագործվում է դպրոցականների գաղափարների նպատակաուղղվածությամբ, բարոյական վարքագծի կազմակերպմամբ:

2. Բարոյական արժեքների ձևավորումը պատմության դասավանդման գործընթացում, մանկավարժական պայմանները

Պատմության դասավանդումը դպրոցում, հատկապես «Հայոց պատմություն» առարկայի, ըստ պետական հայեցակարգի, կապվում է հայի ազգային ինքնագիտակցության ու մտածողության հետ, նրա միջոցով ապահովվում է աճող սերնդի հաղորդակցումը մեր ժողովրդի անցյալի և պատմամշակութային ժառանգությանը: Այստեղից է բխում քաղաքացի կրթելու և դաստիարակելու խնդիրը: Դաստիարակչական խնդիրները, հենվելով գաղափարական հիմքերի վրա, անդրադառնում են ուսուցման նյութի բովանդակությանը: Պատմական կրթությունն ունի քաղաքացի դաստիարակելու, հայրենասիրություն, ազգասիրություն սերմանելու, ներկա ժամանակների իրողությունների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու, հայկական մշակութային նվաճումները աշխարհի մշակութային նվաճումների հետ համեմատելու նպատակներ: Պատմակն գիտելիքների փոխանցման, օրինաչափությունների յուրացման գործընթացը իրականացնում է անձի դաստիարակման և զարգացման տարբեր միջոցներով: Հետևաբար, պատմության դասավանդման արդիականությունը ուղղակիորեն կապված է ակտիվ դիրքորոշում ունեցող քաղաքացի ձևավորելու, խնդրի հետ: Պատմական կրթությունն ունի քաղաքացի դաստիարակելու, հայրենասիրություն, ազգասիրություն սերմանելու , ներկա ժամանակների իրողությունների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու, հայկական մշակութային նվաճումները աշխարհի մշակութային նվաճումների հետ համեմատելու նպատակներ:

Բարոյական դաստիարակության մանկավարժական պայմանները բխում են երեխաների պահանջներից, որոնք հիմնականում պայմանավորված են նրանց փոխհարաբերությունների նպատակաուղղվածությամբ և բնույթով:

Վ.Գ. Բելինսկին նշում էր, որ «մարդուն ստեղծում է բնությունը, սակայն կառուցում և զարգացնում է հասարակությունը»: Յուրաքանչյուր մարդ հոգեբանորեն կախված է հասարակական կարծիքից, նրան մշտապես

հետաքրքիր է մեկ ուրիշի կարծիքն իր մասին, քանի որ դրանով է հիմնականում պայմանավորված ինքնագնահատման օբյեկտիվությունը:

Փոխհարաբերությունները կառուցվում են փոխադարձ վստահության և առավելագույն պահանջկոտության հիմունքով: Մանկավարժի գերխնդիրն է հարկ եղած դեպքում կարգավորել երեխաների փոխհարաբերությունները և հասարակական կարծիքին տալ բարոյական ուղղվածություն:

Բարոյական նորմերն ու կանոններն իրենցից ներկայացնում են հասարակության կողմից սահմանված գործողությունների և հարաբերությունների համակարգ, վարքի հաստատուն մոդել ,որն ուղեկցում է մարդկային վարքագծի և փոխհարաբերությունների բարդ համակարգում: Նորմը բնութագրում է վարքի և հարաբերությունների ընդհանուր սոցիալական ուղղվածությունը:

Կանոնը մասնավոր բնույթի նորմ է և ուղղված է վարքի և հարաբերությունների կանոնակարգմանը տարբեր կոնկրետ հասարակական իրադրություններում: Բարոյական նորմերի և կանոնների յուրացման գործընթացը կարևորվել է նաև Ժան Պիաժեի կողմից:

Ժ. Պ սահմանում է բարոյականությունը որպես բարոյական կանոնների համակարգ, որը երեխային մեծահասակների կողմից փոխանցվում է պատրաստի ձևով և նրա կողմից յուրացվում անգիտակցաբար, առանց հասկանալու: Հետաքրքիր է Ժ. Պիաժեի բարոյական նորմերի յուրացման ընթացքը՝ բաղկացած երեք փուլից.

- ✓ Առաջին փուլում երեխան յուրացնում է կանոնը՝ այն ձևական կիրառելով, նա չի գիտակցում կանոնների նշանակությունը և սահմանված կանոնների միջոցով փորձում է դրսևորել որոշակի վարքագիծ;
- ✓ Երկրորդ փուլում բարոյական կանոնները ձեռք են բերում օրենքի ուժ և կարող են ենթարկվել փոփոխության միայն ընդհանուր համաձայնության դեպքում:

Ինչպես տեսնում ենք, բարոյականության ձևավորումն, ըստ Ժ. Պիաժեի բարոյական նորմերի մեխանիկական յուրացման գործընթաց է, որի արդյունքում ձեռք են բերվում բարոյական վարքագծի պատրաստի նմուշներ:

Կոլեկտիվ փոխհարաբերությունների համակարգում ձևավորվում են հաղորդակցման և վարքի մշակույթը:

Դասի պլան

ԴԱՍԱՐԱՆԸ՝ 10-րդ

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Նոր հարստության հիմնում: Արտաշես 1-ին

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Ամփոփման դաս

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ա/ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ՝

- ✓ Արտաշեսյան թագավորության ստեղծման պատճառահետևանքային կապի յուրացում
- ✓ Կենտրոնացված պետության ստեղծման գաղափարի յուրացում
- ✓ Արտաշես 1-ին բարոյական արժեքների ծանոթացում

Բ/ՍՈՑԻԱԼԱԿԱՆ՝

- ✓ Պատմական մտածողության զարգացում
- ✓ Բարոյական արժեքների ձևավորում
- ✓ Կենտրոնացված պետության գաղափարի արժևորում

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ սահիկահանդես

ՄԵԹՈԴՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐ՝ ԽԻԿ համակարգ, մտագրոհ, ընթերցում, Վենի դիագրամ, համառոտ դասախոսություն, խմբային և անհատական աշխատանքներ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «հարստություն», կենտրոնացված պետություն, հայրենիք, չար և բարի

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քայլ 1. Նախորդ նյութերի համատեղ ամփոփումով: Նախորդ դասին հանձնարարված էր ըստ խմբերի ներկայացնել սահիկահանդես, որտեղ ներկայացվել

են հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները և դրանց հիմնման ու անկման պատաճառահետևանքային կապերը:

Դասն սկսվում է աշակերտների կողմից կազմված սահիկահանդեսի դիտումով: և համատեղ քննարկում:

Քայլ 2. Մտագրոհի միջոցով ամփոփում են սահիկահանդեսները:

Քայլ 3. Համառոտ դասախոսության տեսքով հանձնարարվում է նոր նյութը: Համառոտ դասախոսությամբ ներկայացվում է նոր աշխարհակարգի ձևավորումը Մերձավոր Արևելքում. Արտաշեսյան թագավորության ձևավորումը, Արտաշատ մայաքաղաքի հիմնումը, կենտրոնացված պետության ձևավորումը, բանակը, վարչական բարեփոխումները, տնտեսությունը:

Քայլ 4.

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իմաստի ընկալման փուլում կազմում են Վենի դիագրամ՝ նշելով արդեն իսկ զրույցի միջոցով վեր հանված Երվանդական թագավորության և Արտաշեսյան Հարստության հիմնման նմանություններն ու տարբերությունները: Լրացնում են նորերով:

Վենի դիագրամ



Քայլ 5.

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնարարվում է ներկայացնել Գրականության առարկայից Արտաշես 1-ին նվիրված ստեղծագործություններ՝ <<Արտաշես և Սաթենիկ>>,<<Արտաշես և Արտավազդ>> առասպելները: Եվ փորձել վերհանել պատմության և առասպելաբանության կապը՝ կարևորելով Արտաշես 1-ին բարոյական արժեքների նկարագրումը՝ հասարակության կողմից նրա աստվածացումը և տիտղոսները:

Ներկայացնում են և գնահատվում:

ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սկսել կազմել նոր հարստության արքաներին նկարագրող աշխատանքի շարք՝ լրացնել Արտաշես 1-ինի մասին տեղեկատվությունը :

Եզրակացություն

Այսպիսով, պատմության ուսումնասիրությունը սովորողի աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման և ինքնակատարելագործման արդյունավետ միջոց է և նպաստում է բարձր բարոյական հատկանիշների՝ հայրենասիրության, քաղաքացիական պատասխանատվության, մարդասիրության, կարեկցանքի, ընկերասիրության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը:

Արժեքները՝որպես մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչներ, գոյություն ունեն անկախ անձի գիտակցությունից. հետևաբար, պատմության ուսուցումն իր կարևոր դերն է կատարում համամարդկային, բարոյական բարձր արժեքներով քաղաքացու ձևավորման հարցում:Բարոյական դաստիարակությունը կարևորագույն գործընթաց է, որը իրականացվում է անձնավորության կենսագործունեության ամբողջ ընթացքում: Այն դաստիարակության ընդհանուր համակարգի ամենակարևոր և հին բաղադրամասերից մեկն է:

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում: Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության, դաստիարակության դարբնոցը, սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական, ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում:

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարյական զարգացումն ու ձևավորումն է: Աճող սերնդի բարոյական զարգացումը առաջատար տեղ է գրավում համակողմանի զարգացած անձնավորության ձևավորման գործում, հասկյական

ազդեցություն գործելով և մտավոր զարգացման, և աշխատանքային պատրաստվածության, և ֆիզիկական զարգացման, և գեղագիտական զգացմունքների ու հետաքրքրությունների դաստիարակման վրա։ Ըստ էության այստեղ կատարվում է անձի բոլոր զարգացող կողմերի ազդեցությունների ամենաբարդ փոխներթափանցումը։

Այն բավականին բարդ, երկարատև և բազմակողմանի գործընթաց է, որը իրականացվում է մի շարք մեթոդների, ձևերի և ուղիների օգտագործումով, որոնց միջոցով էլ դաստիարակվողները գիտելիքներ են յուրացնում բարոյականության և նրա կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվում է բարոյական պատկերացումների, հասկացությանների և արժեքների համակարգ։

Ընդհանուր առմամբ կարլի է ասել, որ բարոյական դաստիարկության հիմնական ձևերը հանդիասնում են զրույցը, քննարկումը, դասախոսությունները, բանավեճը, ընթերցողական դասընթացները, էթիկական քննարկումները և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1) Յու. Ամիրջանյան “Մանկավարժություն” Երևան, 2004թ.

2) Յու. Ամիրջանյան և Ա. Սահակյան “Մանկավարժություն” Երևան, 2004թ.

3) Յ.Կ. Բաբանսկի “Մանկավարժական պրոցեսի օպտիմալացում” Երևան, 1983

4) Լ. Թորգոմյան “Մանկավարժության ընդհանուր հիմունքներ” Երևան, 2005թ.

5) Ա.Ս. Մարության Ա.Մ. Դալլաքյան - Նախադպրոցական մանկավարժություն (էջ. 161-274), Երևան, 2005 թ.

6) Գ.Պ. Ռազումիխինա - Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն, Երևան, 2000թ.

7) Ղուկասյան Լ., Միքայելյան Լ. – Մանկավարժություն Երևան 2001թ.

8) Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան – Մանկավարժության տեսություն և պատմություն, Երևան 2007թ.